

մղոն: John of Wirtzburg (1100) կուտայ միւռնոյն չափը: Աւանդութիւնը յետ այնու կ'ենթարկուի փոփոխութեան: Sir John Maundeville (1322) գիտէ միայն Քառասնեկի Անապատը. իր ժամանակակից Marino Sanuto չի յիշեր «բարձր լեռը»: John Poloner (1422) կը խօսի միայն Քառասնեկի Անապատին մասին, և կ'աւելցնէ. «ուրիշները կ'ըսեն թէ ան է Գալիլիոյ ուղղութեամբ բարձր բլուրը երկու մղոն հեռու նոյն լեռնէն, որուն գագաթին վրայ կար մատուռ մը»: Այս հաւանական է որ ըլլայ վերեւ յիշուած վայրը:

Յատակագծին նայելով յստակօրէն կը հասկցուի թէ յիշեալ տեղը Osh el Ghûrab(\*) կոչուած կոնաձեւ գագաթն է: Ընդունուած գաղափարներու հետաքրքրական պարագայ մըն է այս՝ որ սոյն «բարձր լեռան» գագաթը որուն համար Խաչակիրները կը հաւատային թէ մեր Փրկիչը անկէ տեսած է «աշխարհի բոլոր թագաւորութիւնները», Միջերկրականի մակերեսէն գրեթէ 300 ոտք բարձր է:

Յիշեալ բլուրին ստորոտի հովիտը կը կոչուի Wady Mésa'adet Aisa (Յիսուսի համբարձման հովիտը): Այժմ պատճառը պարզ է, Kûrûntûl անունին նման, ծագումը ստուգապէս քրիստոնէական է: Ասիկա պարագայ մըն է որ պէտէվիները պահպանած են Միջին

(\*) Յորգանանի հովիտին մէջ խիստ հետաքրքրական անուն մըն է, Wady Mésa'adet Aisa, «Յիսուսի համբարձման հովիտը»: Այսպէս կը կոչուի լայն հովիտէն առաջնորդուելով Osh el Ghûrab ժայռքերիովի հիւսիսային կողմի բարձր գագաթ մը: Ասիկա շատ հեռու չէ Քառասնեկի Անապատին (Quarantania) վրայ Քրիստոսի փորձութեան աւանդական տեսարանէն, և կարելի է որ նոյն անունը կը պահէ վանական աւանդութեան մը փոխի մը յիշատակներ, Osh el Ghûrabը համարելով «փորձութեան բարձր լեռը» (P. E. F. 1877, էջ 22):